Հանուն պոեզիայի

# Վերահրատարակման առթիվ

«Ապաստող մարդու օրագիր» գիրքը ծնվեց այն ժամանակահատվածում, երբ բանաստեղծական այսպիսի մոտեցումը նոր էր, թարմ շունչ էր։ Այս խոսքով չի թերագնահատվում ավագ սերնդի թարգմանիչների աշխատանքը, պարզապես սոցցանցային գործիքն օգնեց, որ այս բանաստեղծությունները առավել լայն լսարանի հասանելի դառնան։

Լայն տարածումը թեժացրեց կրքերը, պատճառ դարձավ տեղի և անտեղի քննադատությունների, միաժամանակ մերժողների ու «պաշտողների» միջև ծայրահեղ բևեռացման։ Սրբացնելը, պաշտամունքի առարկա դարձնելը, միրայլին SMS-ի կամ աֆորիզմի վերածելը, նաև որոշակի չհիմնավորված դիրքորոշումները չվերահրատարակելու առիթ էին։

10 տարի անց կրքերը կարծես հանդարտվել են, և այս պոեզիան ընդունվում է, ինչպես կա, որպես պոետիկ ճանապարհորդություն իրական գրականության շատ փոքր հատվածի միջով։

Հաշվի առնելով տարիների փորձն ու պատասխանատվությունը, ավելի հղկված լեզվի և ավելի հասուն խմբագրական աշխատանքի կարևորումը՝ նոր հրատարակությամբ այս ժողովածուն ընթերցողին ներկայացվում է լրամշակված և նորովի խմբագրված, թարմացված արտաքինով։

# [illegible]

Իրանական
ժամանակակից պոեզիա

Երկրորդ, հրատարակություն

Երևան
2025

ISBN 978-9939-0-1300-8
© Պողոսյան Էդիկ, 2025

***

1 Սպասել—
ընտրանք։ Չէ,
պարտադրանք։

Ալիռեզա Ռոշան

***

2 Սիրում եմ կտուրի թռչուններին ու կուտը,
որ լցնում եմ նրանց համար ամեն օր...

Մեջները մի ապերախտ թռչուն կա,
գիտեմ՝ մի օր երկինք կելնի ու հետ չի գա.
Ես նրան ամենից շատ եմ սիրում...

Պյարուս Արդոլմալեցյան

## ՀԱՐԱՏԵՎ ԿԱՐՈՏ

*(հատված)*

3 Մեր խոսքերն անավարտ...
Աչք ես թարթում՝
գնալու ժամն է:
կրկին պատմությունը մշտական:
Մինչև գլխի ընկնես,
մեկնումդ անխուսափելի կդառնա:
Ավա՜ղ...

Էհ, տրտմություն ու ցավ հարատև...
Մեկ էլ
ինչ շուտ է ուշը գալիս:

Ղեյսար Ամինփուր

ՉԿԱՆՉՈՂ ՁԱՅՆ

4 Չես խոսում,
որ լռությունը բաց տարածք լինի,
չես գիտակցում,
որ տարածքները
լցվել են
լռության տագնապով:

***

5. Ասելու համար
գոցում եմ բերանս,
փակաչք ման գալիս.
գուցե
մի բան ասեմ,
գուցե
մի բան տեսնեմ...

***

6 Քնելուց առաջ
շուտ եմ գալիս,
չի խոսում.
իրար ենք նայում
ես
ու դիմացի պատը…

***

7 Մեկտեղանոց մահճակալները,
այլ կերպ ասած՝ մենություն,
երկտեղանոցները՝
երկու անգամ մենություն...

***

8. Փողոցից
մեկը սուլելով մոտենում է
սենյակիս պատուհանին:

Սենյակի խավարում
այժմ՝ ծխախոտիս կրակին,
մտածում եմ՝ նրա մասին,
որ կարծում է՝ միայնակ է:

Փողոցից
մեկը սուլելով հեռանում է
սենյակիս պատուհանից:

***

9 Երբեմն
մարդն առավել մենակ է,
քան իր լռությունն է պատմում:
Անցյալ գիշեր
մենությունս ճզմել,
գրչածայրիդ էր հասել...
Եթե գրեիր ինձ...
Թե գրեիր...
Երբեմն
մենությունն ավելի քան մենակ է
երևալու համար...

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark